

ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆԻՅԷ

ԺԹ. ԴԱՐ

(Շար. տես «Բազմալեզու» 1957, թ. 11-12, էջ 274)

Դ.

ԱՇՈՒՂ ԻՄՐԱՆ

Հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ դեռ չուսումնասիրուած եւ համարեա մոռացուած երգիչներէց մէկն է նշանաւոր աշուղ Իմրանը, իսկական անունով Ղազարը, որ հայ գուսանական արւեստի զարգացման գործում ուշադրաւ դեր է կատարել: Չնայած այդ հանդամանքին, մինչեւ այսօր էլ նրա մասին հայ մամուլում չկայ մի սեղմ յօդուած:

Ծնել է նա ժԹ. դարի 40ական թւականներին Ծարուրի Քեչտաղ գիւղում, ուր ստացել է իր նախնական կրթութիւնը: Նրա մանկութիւնն ու պատանեկութիւնն անցել է գիւղի վճիռ աղբիւրների մօտ հովասուն ծառերի տակ, կանաչ ու ծաղկազարդ մարգերում: Դա այն պատմաշրջանն է, երբ Քեչտաղ գիւղն են զաւրիս Նախիջևանի եւ Դարալագեաղի ժամանակի յայտնի աշուղները, որոնք իրենց սաղի ու չօնգուրի հմուտ նւագածութեամբ եւ երգերով սպաւորութիւն թողնում գեղջուկ ժողովրդի վրայ, իսկ պատանի Ղազարի (Իմրանի) սրտում դարթեցնում աշուղական արւեստի սէրը:

Այդ շրջանում էլ նա իր ժամանակի յայտնի աշուղներից Հազարի մօտ սովորել է սաղ նւագելը եւ հետզհետէ հմտացել գուսանական արւեստին: Այնուհետեւ հայերէն եւ թուրքերէն լեզուներով երգեր է յօրինել, սպա թափառել է Դարալագեաղի եւ Նախիջևանի հայաբնակ ու թրքաբնակ գիւղերը եւ ամէն տեղ էլ իր սաղի լարերի վրայ հնչեցրել աշուղական երգն

ու երաժշտութիւնը: Հնչեցրել է նա զըլ-խաւորապէս իր յօրինած երգերը՝ ժողովրդական տօներին, ուրախութիւններին եւ իր քաղցր ձայնով կարճ ժամանակում ժողովրդի մէջ մեծ յարգանք ու հեղինակութիւն է վայելել, իսկ իր սաղի վարպետ նւագածութեամբ՝ հռչակել է Իմրանի մականունով, այսինքն՝ ճարտար, շինարար:

Նրա աւանդ թողած թէ՛ հայերէն եւ թէ՛ թրքերէն երգերը մինչեւ օրս էլ չեն յանձնուել հայ աշուղական գրականութեան պատմութեանը եւ ոչ էլ առանձին գրքոյկով լոյս են տեսել: Այդ ստեղծագործութիւնները մեծ մասամբ քնարական են, որոնց մէջ տեսնում էք աշուղական արւեստի պարզութիւն, զգացմունքի անկեղծութիւն եւ պատկերաւորութիւն: Այդ երգերում աշուղը վառ ու բազմազան գոյններով պատկերել է իր սիրուն եարին եւ երգել է իր հոգեկան վիճակը:

Ունի նաեւ կրօնական երգեր, որոնք բարոյախօսական բնոյթ ունեն:

Աշուղի ստեղծագործութիւններից չորսը պահպանուել են մեր գրական արխիւում գտնուող աշուղական «Դավթարի» 40-44րդ էջերում: Դրանցից ուշագրաւ է «Մի հատ Սոնա ես» խորագրով երգը, որի տակ գրուած է - «1866 թ. Քեչտաղ»: Այդ համր թւականը վկայում է, որ աշուղն իր տանաւորը գրել է մեզանից 91 տարի առաջ, իր ծննդավայրում, յետոյ ընդօրինակել է 1870 թւականին գրած աշուղական ձեռագիր մատենանում: Ուշագրաւ են նաեւ երգի ներքեւում արձանագրուած կենսագրական այս տողերը. «Մի անգամ աշուղ Իմրանը Դարալագեաղի Քարաղլուխ

գիւղում, աղբրակին, տեսել է սիրուն աչքերով մի գիւղալ կին, որի վրայ գրել է այս «դոճման»: Դա պարզ, բայց պատկերաւոր եւ արեւելեան վառ երանդաւորումներով կառուցուած մի սիրերգ է, ուր աշուղը գծել է աղբիւրի մօտ տեսած սիրուն կնոջ պատկերը: Ահա ոտանաւորի նկարը.

«Մի հատ Սոնա ես, աննման ես, կէրեն ինձ Փափուր(1) Ֆնջան աչքերդ. Սօսքը մարգարիտ ա, գին չունենայ, Խելքս տարաւ լալ ու մարջան(2) աչքերդ:

Մենք մէ հոգի պէտք է տանք մեր տէրին, Օրօխկեմ(3) քիրմանայ շալերը բերին. Ինձ գրիր Քեարամի նման կրակդ, Ինձ էրեց էդ ջուան—ջան աչքերդ:

Իմրանին եմ, խօսքերս արիր եմ խու— [մար(4), Աչքերդ թուլս ին, ընքերդ(5) կամար. Քեզի կու սիրամ իմ ջանիս համար, Ձի քէնվում(6) Հաղիրպէջան աչքերդ»:

Աշուղական արւեստի մի այլ ստեղծագործութիւն է «Ասեմ, աղջի» խորագրով ոտանաւորը, որի մէջ աշուղը նկարագրել է իր սիրային սպրումներն ու իր հոգեկան յոյզերը: Լիրիկական երգին առանձին զրաւչութիւն են տալիս լեզական բարբառը եւ կառուցողական արւեստը, որ աշուղական գրականութեան մի ուշագրաւ էջն է կազմում: Այստեղ գծենք երգի ամբողջական պատկերը.

«Ասիմ՝ «Աղջի», խօսք տուար, խօսք ա— [տար». Ձինքդ ասիր՝ խա՛(1), ետ դառար՝ չէ՛, չէ՛»:

1. Պսպղուն, փայլուն: - 2. Թանկագին բարեր: 3. Ուղարկեմ: - 4. Քաղցր: - 5. Ունեմ: - 6. Գտնուում:

Ձինքդ խօսելով իմ ջանս(2) առար, Ձինքդ ասիր՝ խա՛, ետ դառար՝ չէ՛, չէ՛:

Ձեռումդ դրիր ես ոսկի թանան(3), Սօսքերդ քոզցր(4), տիւն(5) արիր մահ— [նան(6).

Ես իկեամ(7) խամբիւրեմ(8) քո սպիտակ [չամամ(9),

Ձինքդ ասիր խա՛, ետ դառար՝ չէ՛, չէ՛:

Ինչ խրատ տամ քեզ, պահիր քո քու— [չին(10),

Անդաջ(11) մի՛ տիր դու անգէտ սարխո— [չին(12).

Ես իկեամ պահեմ(13) քո կարմիր թուչին, Ձինքդ ասիր՝ խա՛, ետ դառար՝ չէ՛, չէ՛:

Աչքդ Իմրանն եմ, խօսքերս ի խումար(14), Երեսդ փախուկ ա, ճակատդ պայծառ.

Քեզ շատ սիրացի իմ ջանիս խամար(15), Ձինքդ ասիր, խա՛, ետ դառար՝ չէ՛, չէ՛»:

Աշուղ Իմրանի բանաստեղծական գրականութեան մէջ ուշագրաւ տեղ է գրաւում նաեւ «Արի՛, ինձ խետ խօսա» վերնագրով ոտանաւորը: Դա մի սիրուն «մուխամազ» է, որը գրուած է Սայեաթ-Նովայի աշուղական արւեստի երանդաւորութեանը եւ գրաւիչ է իր պատկերաւոր դժագրութեամբ ու զգացումի ջերմութեամբ: Երգն ուշագրաւ է նաեւ այն տեսակէտից, որ պարզում է երգչի ընտանեկան կեանքի մի տխուր էջը: Աշուղի մինուճար զաւակը ծաղիկ հասակում վախճանում է եւ խոր վիշտ պատճառում երգչին: Այդ առիթով նա երգում է ոտանաւորն իր կնոջ մասին, երբ նա որդու դիակի վրայ ընկած՝ դառնակակիծ սրտով արտասուում է: Ահա երգի պատկերը.

4. Քաղցր: - 5. Գուն: - 6. Պատրւակ, պատհանաբանութիւն: - 7. Եկայ: - 8. Համբուրեմ: - 9. Փոքրիկ հոտաւէտ սեխ: - 10. Ականջին: - 11. Ականջ: - 12. Հարբած: - 13. Համբուրեմ: - 14. Քաղցր: - 15. Համար:

«Արի, ինձ խեղ(1) խօսա՛, քեզի մատաղ,
 իմ հողի ջան, սիրելի,
 Աչքդ ու ունքդ ինձ վառեց,
 արել է բրինձ(2), սիրելի.
 Տիւն(3) բարասանի ծաղիկ ես,
 սարերու սէյրան(4), սիրելի,
 Լէյլուի ու մաղլումի պէս ես
 էլամ հէյրան(5), սիրելի,
 Շիրինի ֆահրադու նման
 ումբա արիւր վերան(6), սիրելի:

Մին հատ միլիօնին արժան ա
 իմ սիրականի մի պաշն(7),
 Խնդրենք, որ մեզի քեօմակ(8)
 լինի զօրավարի սուրբ խաչն,
 Իսկեանդարի Զուլղարն ասենք,
 ծովերէն առաւ խարաջն(9),
 Կոստանդիոս թագաւորը զլիսին
 ունէր թագն ու թաջն(10),
 Հուքմ(11) ունենաս աշխարհիս մէջն,
 աղալաթ(12) խան ես, սիրելի:

Շարուրի աչքդ Ղազարի սրտումը
 մի հասրաթ(13) մնաց,
 Աստծու սիրու խաթրի(14) համար՝
 աջ ձեռովդ երեսդ բաց,
 Պոօշներդ քաղցր նարաթ ի,
 վարդաջրով երեսը լուաց,
 Շէյրայի բլբլին ասինք՝
 գիւլի վարդի համար տխուր լաց,
 Քեզ զովաց, թամամ(10) արաց էս,
 է՛յ աչքդ Իմրա՛ն, սիրելի»:

Աշուղ Իմրանին յօրինել է նաեւ կրօնական բովանդակութեամբ երգեր, որոնցից 1870 թւականին գրած ձեռագիր մատենանում ընդօրինակւած է «Մէ նեղ տեղ ընկանք» վերնագրով ոտանաւորը,

1. Հեո: - 2. Խորովու: - 3. Դուս: - 4. Շըբ-ջագայոզ: - 5. Սքանչացում, Խիպմուսիֆ: - 6. Աւերակ, Բանդաւ: - 7. Համբոյր: - 8. Օգմական: - 9. Կերպարի մի տեսակը: - 10. Պսակ: 11. Հրաման, իշխանութիւն: - 12. Արդարութիւն: 13. Կարօտ: - 14. Ի սեր: - 15. Կատարեալ:

որի տակ գրւած է Մարտիրոս գիւղ: Դա ցոյց է տալիս, որ աշուղն ապրել է նաեւ նոյն գիւղում, ուր գրել է իր ոտանաւորը եւ հնչեցրել է աշուղական սաղը:

Մարտիրոսը բարձր դիրքի վրայ ընկած, բանաստեղծական մի գեղատեսիլ գիւղ է, որի բնակիչները գաղթել են Իրանից:

Գիւղի կենտրոնում հպարտ կանգնել է Մխիթարի առատ, զուլալ ու սառն ագրիւրը, որի գեղեցկութիւնն է կազմում լայն եւ շատ բարձր խաչարձանը: Դա մի պատմական թանկագին վոթոզ է, որի վրայ քանդակւած Մեսրոպեան լուռ տառերը լեզու են առնում եւ ամէն մի այցելուի պատմում, որ գիւղը հիմնել է Դեգկայ որդին՝ Մխիթարը, 1283 թւականին, Պոռչ իշխանի եւ նրա Հասան որդու հրամանով: Ահա այդ արժէքաւոր վաւերագիրը. «Ես Մխիթար, որդի Դեգկայ, հրամանաւ իշխանաց իշխանին Պոռչոյ եւ որդւոյ իւրոյ Հասանայ, շինեցի զգիւղս Մարտիրոս եւ կանգնեցի զխաչս ի դուռն սուրբ վկայարանիս ի բարեխաւսութիւն ինձ եւ ամուսնոյն իմոյ Մարմիրին եւ որդւոյ իմոյ Դուղաքանին. կազմեցաւ ձեռամբ Շնորհաւորին ի թվին ԶԼԲ. (732 + 551 = 1283)»:

Այս արձանագրութիւնը հաստատում է, որ գիւղն ունի 674 երկար տարիների պատմական անցեալ եւ, որ կարեւորն է, մի ժամանակ ունեցել է բազմաթիւ բնակիչներ, որոնց մասին վկայում են լայնածաւալ գերեզմանատները՝ իրենց խաչարձաններով, տապանաքարերով եւ կիսաքանդ ու կանգուն ֆեղեցիներով:

Գիւղի մի այլ գեղեցկութիւնն է կազմում Եագիւրդ բարձր լեռան ստորոտում հպարտ բազմած նշանաւոր վիմափոր եկեղեցին, որ ձեզ յիշեցնում է հիասքանչ Գեղարդը: Եկեղեցու հարաւային պատի վրայ քանդակւած է մի թանկագին արձանագրութիւն, ուր ընդգծւած են հետեւեալ տողերը. «Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան Յակոբայ եւ քահանա-

յապետութեան դաւառիս Տէր Սարգսի եւ ի տէրութեան իշխանաց իշխանին Պոռչոյ եւ որդւոյ նորին Պապաքին եւ Հասանայ եւ որդւոյ էաչոյ եւ մօր նորին Պարոն, եւ Մատթէոս վարդապետ կանգնեցի... եւ կատարեցի գեղեցկացիս ի բարեխաւսութիւն ինձ եւ Պետրոսի եւ ծնողաց մերոց եւ պարոնաց մեր եւ ամենայն հաւատացելոց. որք մտանէք, Աստուած ողորմի ասէք մեզ եւ ձեզ եղիցի. թվին ԶԼԵ (735 + 551 = 1286)»:

Այս փաստական վաւերագիրը վկայում է, որ եկեղեցին 671 տարւայ հնութիւն է հիմնւել է Մատթէոս վարդապետի հերոսական ջանքերով, 1286 թւականին, եւ որին գիւղացիները կոչում են «Մ. Աստուածածին»:

Ահա այս գիւղում աշուղ Իմրանը գրել է կրօնական ոտանաւորը: Դա մի անպաճոյճ երգ է, նւիրւած վիմափոր եկեղեցուն, որի պատկերն է.

«Մէ նեղ տեղ ընկանք, չունենք մէ ում
 [մուշ(1)]
 Բալքեայ(2) մեզի ըլնես եար՝ Աստուած
 [ծածի՛ն].

Եղիսարէթին ունէր՝ քաղցր ողին,
 Որ թալեց, պահպանեց, Աստուածածին՝:

Տասներկու միլլէթ(3) աչքը(4) գրէ քո
 [լուսին],

Գարբիէլ ողջոյն բերաւ Մարիամայ կուսին.
 [սին].

Բարեխօս ըլնիս մեզի խէտ(5) բարի լուսին,
 [սին],

Դատաստանին անես ճար, Աստուածածին՝
 [ծի՛ն]:

Աչքդ Իմրանի՛, աչք մի՛ տի(6) խալխի(7)
 [վարդին],

Յոր երանու ջան ընկաւ անքեան մէ որթի.
 [թին].

1. Յոյս: - 2. Թերես, գուցէ: - 3. Ազգ, ցեղ: 4. Աչք: - 5. Հեո: - 6. Գնել: - 7. Ժողովուրդ, բազմութիւն:

Հայր Արրահամ պէտք է կտրէր մէկ որթի,
 [գին],
 Տէր Յիսուս ուղարկեց զառ, Աստուածածին՝
 [ծի՛ն»:

Թէ ո՞րտեղ են գտնուում աշուղ Իմրանի յօրինած միւս երգերը, յայտնի չէ: Մի հանգամանք, սակայն, պարզ է, որ նա իր սաղով ու յօրինած աշուղական երգերով ո՛չ միայն առանձին փայլ է տւել իր ժամանակի ժողովրդական հանդէսներին, այլեւ գեղջուկների մէջ վառ է պահել աշուղական բանաստեղծութեան ու երաժշտական արեւստի սէրը, իսկ իր ստեղծագործութիւններով զարկ է տւել հայ գուսանական մշակոյթին: Նրա այդ գերն արժանի է ջերմ դնահատութեան:

Ե.

ԱՇՈՒՂ ԱԼԼԱՆՎԵՐԴԻ

ԺԹ. դարի Դարալագեաղի եւ Նախիջևանի հայ գուսանների շարքում յայտնի է նաեւ աշուղ Ալլահվերդին, որի մի երգը - «Արի՛, արի՛, եա՛ր» ընդօրինակւել ենք 1870 թւականին գրւած աշուղական «Դավթարից»: Ոտանաւորն ուղագրաւ է իր կառուցողական արեւստով - սկիզբը գրւած է հայերէն, ապա՝ հայերէն եւ թըրքերէն լեզուներով: Այդ հանգամանքն էլ նշում է, որ աշուղ Ալլահվերդին լաւ ծանօթ է եղել, բացի հայերէնից, նաեւ թըրքական աշուղական արեւստին:

Ոտանաւորը, իր բովանդակութեամբ, մի սիրերգ է, տողորած արեւելեան վառ զգացումներով, ուր աշուղը պատկերել է իր սիրային խոր ապրումները եւ հոգեկան ծանր վիճակը: Ամբողջ ոտանաւորը սիրոյ բացազանչութիւն է, որ ներկայացնում է հետեւեալ պատկերը.

«Արի՛, արի՛, նազ մի՛ արա՛, եա՛ր,
 Աստուածդ կը սիրաս.
 Նեղացիր եմ, բռնի ձեռնէս, տա՛ր,

Աստուածդ կը սիրաս :
 Քեզ խմայ(1) էքի(2) դցեցի,
 Որ տիւ(3) էլ քաղես բարը(4) .
 Բէյմուրվաթ(5), ինչպէ՛ս զմըշար(6),
 Իմ սրտիս զարկիր եարայ(7),
 Տէրն ինք զամաթ(8) անի,
 Պամբիւրենք(9) մատմառ քարը .
 Արի՛, իմ դարդիս տիւ արա՛ ճար,
 Աստուածս կը սիրաս :

Ման սանըն զարդըննան հալաք ամ, հա-
 [լաք,
 Աչքդ, ունքդ կաթի(10) մի քիւլու(11) ախ-
 [չարք .
 Ման սանայ եօլլադըմ, հիլ, դարչին, մը-
 [խակ,
 Մեկնի, ա՛ն ձեռդ, եա՛ր, Աստուածդ կը
 [սիրաս :

Ղաչլարն խան օլըֆ, չիւրբուրը թախտայ,
 Ասեցիմ՝ մի պազ(12) տո՛ւր, ասեց՝ բէ-
 [վախտ(13) ա .
 Ալլահվերդի դիէր՝ խալվաթ(14) օթադտայ
 Ես տիւն(15) ըլնենք, եա՛ր, Աստուածդ կը
 [սիրաս» :

Ձ .

ԱՇՈՒՂ ՍԱՐԳԻՍ ԹՈՒՆԱՐԻ

Դարալագեազի Քեչիչքեանդ գիւղի ժո-
 դովրդի զաւակն է կոյր աշուղ Բալայ Սար-
 գիսը, որ իր երգերի մէջ յայտնի է Թու-
 նարի մականունով, որ նշանակում է հեղ,
 համեստ գիտնական :
 Նրա կեանքի եւ աշուղական գործու-
 նէութեան հիմնական գծերը մինչեւ օրս
 էլ հայ գուսանական գրականութեան
 պատմութեան մէջ չեն արձանագրւած :

1. Համար : - 2. Այգի : - 3. Դու : - 4. Առաջին
 պտուղը, երախայրիք : - 5. Անգուք, անխիզն :
 6. Խնայել : - 7. վերք : - 8. Արժանի : - 9. Համ-
 բուրեմք : - 10. Կարծեմայ : - 11. Ամբողջ : -
 12. Համբոյր : - 13. Անժամանակ, տարժամ : -
 14. Գատարկ, պարպ : - 15. Դուն :

Ապրել եւ ստեղծագործել է նա ԺԹ .
 դարաշրջանում, 1800ական թւականնե-
 րին : Իր նախնական կրթութիւնն ստացել
 է Քեչիչքեանդի տարրական դպրոցում :
 Պատանի հասակում, ծաղիկ հիւանդու-
 թիւնը գրկել է նրան իր պայծառ աչքերի
 լոյսից : Այդ հանդամանքը մեծ վիշտ է
 պատճառել նրա ծնողներին, միաժամա-
 նակ խորապէս յուզել է Սարգսի հոգեկան
 աշխարհը : Սակայն, այդ դրութիւնն եր-
 կար չի շարունակել : Գիւղ եկող աշուղ-
 ների մօտ նա սովորել է սաղ նւագելը եւ
 ստացել է աշուղական կոչում : Այնուհե-
 տեւ նա իր ամբողջ կեանքը նւիրել է ա-
 շուղական արւեստին : Շրջել է Դարալա-
 գեազի հայաբնակ ու թրքաբնակ գիւղերը
 եւ իր սաղի նւագածութեամբ ու յօրինած
 երգերով փայլ է տւել գեղջիկական հան-
 դէսներին ու «մաջլիսներին» : Երգել է նա
 թէ՛ իր սեփական երգերը եւ թէ՛ ժամա-
 նակի յայտնի ու ժողովրդականութիւն
 ստացած աշուղների ստեղծագործութիւն-
 ները :

Քեչիչքեանդի ծերունիները վկայում են,
 որ ամէն անգամ աշուղը հանդէսներին նը-
 ւագելիս նրա սաղի ամէն մի լարի ձայնն
 իր շուրջն է հաւաքել մեծ բաղմութիւն :
 Իր գիւրական ձայնով ու սաղի վարպետ
 նւագածութեամբ նա հանդիսականներին
 միշտ էլ ոգեւորել է եւ ապրեցրել աշու-
 ղական երգի՛ ու երաժշտութեան աշխար-
 հում, իսկ նրանք հիացմունքի զգացմուն-
 քով «Կեցցէ՛ աշուղ Թունարին» բացա-
 դանչելով՝ ամէն կողմից ծափահարել են
 եւ գովաբանել նրա աշուղական արւեստի
 վարպետութիւնը :

Թունարին քնարերգակ-աշուղ է . յօրի-
 նել է գլխաւորապէս լիւրիկական երգեր,
 որոնց մէջ նա դժել է իր սիրածի նկարը
 եւ արտայայտել իր քնարական սպրում-
 ները, խոհերն ու յոյզերը : Այդ երգերից
 երկուսը զարգարում են 1870 թւականին
 գրւած աշուղական «Դավթարի» էջերը,
 որոնք իրենց բովանդակութեամբ ձեզ
 ցայտուն դադափար են տալիս աշուղի
 բանաստեղծական ձիրքի, լեզւական ար-

ւեստի եւ մտքերի մասին : Դրանցից մէկը
 մի սիրերդ է, ուր աշուղն արեւելեան
 պատերաւոր երանգաւորումներով երգել
 է իր սիրելի եարի գեղեցիկ պատկերը եւ
 իր հոգեկան սպրումները : Ահա այդ սի-
 րերդը .

« Ինձ մի՛ արա դու գիւնահաքար(1),
 Պէտք է իմանաս հալս(2), սիրելի .
 Քու սրտումդ ուսմ(3) էլ չկայ,
 Քանց Ռուստամ Չալը, սիրելի :

Բաղի(4) միջում վարդի ծառ աս,
 Շատ քաղցր ես, եարող բառ աս .
 Քեզ արժան է ոսկի խառայ(5)
 Բարակ մէջքիդ դալ(6), սիրելի :

Բաղի միջում ծառի բար(7) պս,
 Դիւն(8) ես իմ քիւլի(9) իխտիարաս(10) .
 Իմ սրտումս մի՛ թող եարայ(11),
 Արի մօտս դալ(12), սիրելի :

Բոյդ չինար սալբի ծառ աս,
 Ճերմակ սինադ(13) մարմառ քար աս .
 Ծոցիդ մէջը էն ջուխտ(14) նառ(15) աս,
 Շատ թանկագին մալ(16), սիրելի :

Բալայ Սարգիսն եմ Թունարի,
 Տրտում սիրոս տիւն(17) զարդարի .
 Ինձ մտիդ քից(18), մօտս արի,
 Տիւն լողման ես լալ, սիրելի » :

1. Մեղաւոր : - 2. վիճակ, դրութիւն, տրա-
 մադրութիւն : - 3. Դուք, խղիւտումք : - 4. Այգի :
 5. Կերպասի մի տեսակը : - 6. Ձառ գօտի : -
 7. Առաջին պտուղ : - 8. Դուն : - 9. Ողջ, ամ-
 բողջ : - 10. Զրոյց : - 11. վերք : - 12. Մնա՛ :
 13. Կուրծք : - 14. Զոյգ : - 15. Նառ - 16. Ապ-
 բամբ : - 17. Դուն : - 18. Բեր, գցիր :

Թունարի սիրերդներից յիշատակենք
 նաեւ «Պատուելի ես» խորագրով ոտանա-
 ւորը, ուր աշուղը նոյնպէս վառ պատ-
 կերներով վրձինել է իր եարի գեղեցիկ
 յատկութիւնները եւ սիրային սպրումնե-
 րը : Ահա երգի ամբողջական նկարը .

«Պատուելի ես, անման, սիրելի՛,
 Տիւն(1) հաքի դառ(2), զարդարելի խէ,
 [այբ, ոէ (խառ)(3) .
 Տիւն ես սրտիս ջանանս, սիրելի,
 Արժան է չինար բոյիդ(4) դա, այբ, ոէ
 (զառ) :

Դարդիդ սէրէն կրակ դցիմ ջանս,
 Հասկացող ես, իմացի իմ բանս .
 Կրակած եմ մինչեւ լեզուս բերանս,
 Թող կենամ ես աշխարհքն վեւ, այբ, ոէ,
 (վառ) :

Սարգիս Թունարին եմ, վարդին զարին-
 [ջի(5),
 Չորս կողմումդ լալայ, նարգիդ, նարին-
 [ջի .
 Յօժար կամօք մին եղին(6) էլ տուր ինձի,
 Որ չլինի մեր բանը ջէ, այբ, ոէ
 [(ջառ)»(7) :

Սարգիս Թունարին Դարալագեազի նը-
 շանաւոր աշուղների մէջ համարում է ա-
 մէնից պատկառելին : Նա իր սաղով աշու-
 ղական երգերի տարածման եւ գեղջուկ
 ժողովրդի գեղարւեստական ճաշակի զար-
 զացման խնդրում մեծ դեր է կատարել :
 Այդ տեսակէտից էլ նա հայ աշուղական
 արւեստի պատմութեան մէջ իր արժանի
 տեղն ունի :

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

1. Դուն : - 2. Ոսկեքել : - 3. Յարմար : - 4.
 Հասակ : - 5. Գերի, անբուն, անհանգիստ : -
 6. Արտօնութիւն : - 7. Յայտնի :